ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԸ

1969-1999

1999 թվականին, Երուսաղեմի Եբրայական համալսարանի Հայագիտական բաժինը կ ամբողջացնե իր երեսուներորդ տարին: Այս հոբելյանական տարին նշանավորելու համար կարգ մը նախաձեռնություններ կազմակերպվեցան, որոնցմե առաջինը շքեղ ճաշկերույթ մրն էր, որ տեղի ունեցավ ապրիլ ամսուն, Ուաշինկթոնի Հայաստանի Հանրապետության գեսպանությանը մեջ, տիկին Անի Թոթահի ե պ. Արիս Մարտիրոսյանի նախաձեռնությամբ: Ճաշկերույթին առիթով եղած նվիրատվությունները պիտի հատկացվին Հայագիտական բաժնի ձեռնարկներուն:

Իսկ մայիս 24-26 Երուսաղեմ տեղի ունեցավ միջազգային շատ հաջող գիտաժողով մը, նվիրված Հայագիտական բաժնի երեսունամյակին: Այդ երեքօրյա գիտաժողովին ընթացքին տասնեութ մասնագետներ աշխարհի զանազան կողմերեն հավաքված, զեկուցումներ տվին «Հայերը Երուսաղեմի ե Սուրբ Երկրին մեջ» թեմային վրա: Մասնակցող հայագետներուն մեջ կային տք. Թամիլա Մգալոբլիշվիլի (Թբիլիսի), փրոֆ. Զեև Ռուբին (Թել Ավիվ), փրոֆ. Գեոդ Բրուտյան (Երևան), փրոֆ. Բենի Գեդար (Երուսաղեմ), տք. Թեո վան Լինթ (Լեյդեն), տք. Քլոտ Քոքս (Թորոնթո), տք. Կոստանդին Լեռներ (Երուսաղեմ), տք. Կոստանդին Զուքերման (Փարիզ), տք. Բերտ Վոքս (Բոստոն) և ուրիշներ: Ներկայացված նյութերուն ցանկը ճոխ էր. ինչպես «Երուսաղեմի քաղաքացվոց համայքի բարբառ», «Հայկական տարրը խաչակրական ազնվական դասակարգին մեջ», «Վարդավառի տոնին իմաստը», «Սուրբ Նունեի կյանքը», և «Գրիգոր Տգա Կաթողիկոսի Ողբ ի վերա անկման Երուսաղեմի» և այլ նյութեր:*

Նաև գիտաժողովի սկսելեն առաջ, Հրեական ազգային և համալսարանական մատենադարանի պետ փրոֆ. Խառա Յաֆեթ մասնավոր տեսակցության մը ընթացքին ներկայացուց մատենադարանի հավաքածոներուն մեջ պահպանված հայկական ձեռագիրները և հնատիպ գիրքերը: Նույն նիստի երկրորդ կիսուն, ամերիկաբնակ հայտնի մատենադարանապահ Սիլվա Մանուկյանը խոսեցավ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի հարուստ մատենագրական հավաքածոներու ներկա վիճակի մասին: Ներկաները հետո այցելեցին Երուսաղեմի Հայոց Թաղի զանազան հաստատությունները, առաջնորդությամբ գեր. տ. Կյուրեղ Եպս. Գաբիկյանի, մասնավորաբար Ս. Յակոբյանց Մայր Տաճարը, և Ս. Թորոսի ձեռագիրներու մատենադարանը:

---

* *ՊՐՀ-ի խմբագրության Երուսաղեմի եբրայական համալսարանից ստացել է հայագիտական սույն տեղեկատվությունը:*

Գիտաժողովի պաշտոնական բացումը կատարվեցավ մայիս 24-ի երեկոյին: Ժամանող մասնագետներուն և ներկաներուն իր ողջույնի խոսքը ըսավ փրոֆ. Մայքըլ Սթոուն, Հայագիտական բաժնի վաստակավոր ղեկավարը: Խոսք առին նաև պ. Յոլակ Մոմճյան, Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոսը Երուսաղեմ, պ. Էլիյահու Հոնիգ, Եբրայական համալսարանի փոխ-նախագահը, և փրոֆ. Աբրահամ Դերյան, Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարանի ուսմանց տեսուչը:

Մայիս 25-ի երեկոյան, օրվան զեկուցումներու ավարտին, երեսունամյակին նվիրված հանդիսավոր ճաշկերույթ մը տեղի ունեցավ, ներկայությամբը համալսարանի և Երուսաղեմի հայոց համայնքի բազմաթիվ հրավիրյալներու: Մաղթանքի ջերմ խոսքերով բացումը կատարեց Նորին Ամենապատվություն Թորգոմ արք. Մանուկյանը, պատրիարք Երուսաղեմի հայոց: Իրենց շնորհավորությունները ներկայացուցին նաև Երուսաղեմի Եբրայական համալսարանի նախագահ փրոֆ. Մենահեմ Մագիդոր, հումանիստիկայի ֆաքուլթեթի ղեկավար փրոֆ. Յայիր Զաքովիչ, Հայաստանի Գիտությանց ակադեմիայի փոխ-նախագահ փրոֆ. Գեորգ Բրուտյան, Association Internationale des Etudes Armeniennes-ի քարտուղար տք. Թեո Վան Լինթ և Society for Armenian Studies-ի նախագահ փրոֆ. Գենիս Փափազյան: Կային նաև հաճելի պահեր նվիրված հայկական երաժշտության, կազմակերպված տոքդորական աստիճանի թեկնածու Նունե Պողոսյանի կողմե, մասնակցությամբ Ս. Յակոբյանց տաճարի դպրապետ Վարուժան Մարգարյանի և Հայր Գուսան Վրդ. Ալճանյանի:

Գիտաժողովի երրորդ օրվան երեկոյին, Նորին ամենապատվություն Թորգոմ արք. Մանուկյանը հյուրասիրեց մասնագետները և հրավիրյալները, պատրիարքարանեն ներս տեղի ունեցած ընդունելության մը:

Գիտաժողովին կազմակերպողները և հովանավորողները մասնավոր գոհունակություն հայտնեցին այն ջերմ շնորհավորականին համար որ իբրև նամակ հասավ Համալսարանի ղեկավարության, Նորին Սրբության Գարեգին Ա. կաթողիկոսի կողմե: Շնորհավորականներ ղրկեցին նաև Նորին ամենապատվություն Թորգոմ Արք. Մանուկյան, պատրիարք Հայոց Երուսաղեմի, Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյան, Հայաստանի Գիտություններու ակադեմիայի նախագահ փրոֆ. Ֆադեյ Սարգիսյան, և Նորին գերապատվություն Խաժակ արք. Պարսամյան, առաջնորդ ամերիկայի հայոց Արևելյան Թեմին:

Իսկ հունիս ամսուն սկիզբը միօրյա գիտաժողով մը ևս գումարվեցավ եբրայախոսներուն համար, նաև «Հայերը Երուսաղեմի և Սուրբ Երկրի մեջ» թեմային շուրջ: Ժողովը տեղի ունեցավ Երուսաղեմի Եբրայական համալսարանի և Երուսաղեմի Բեմ Զվի Ինստիտուտի հովանավորության տակ: Առաջին նիստին, փրոֆ. Մայքըլ Սթոուն մատնանշեց հայ գաղութին կարևորությունը Իսրայելի մեջ այսօր: Հիշատակեց նաև թե հայկական գիրերու հնագույն նմուշները կը գտնվին Նազարեթ քաղաքի և Սինայ անապատին մեջ, փաստելով հայոց շատ հին ներկայությունը Ա. Երկրեն ներս:

Հետո Թել Ավիվ համալսարանի փրոֆ. Զեև Ռուբին խոսեցավ, իրեն նյութ ունենալով «Երուսաղեմի եպիսկոպոսները ըստ հնագույն հայկական աղբյուրի մը» և ցույց տալով Երուսաղեմի V դարու հայկական ճաշոցին կարևորությունը իբրև պատմական տեղեկությանց աղբյուր: Պ. Դավիթ Ամիթ, Իզրայելի կառավարության հնությանց պաշտպանման բաժնի ներկայացուցիչ նկարագրեց այն հայկա-

կան և հունական վանքի ավերակները, որոնք քանի մը տարի առաջ հայտնաբերվեցան Երուսաղեմի Հին քաղաքի Դամասկոս դռնեն դուրս: Իսկ վերջին զեկուցողը տք. Նիրա Սթոուն էր, Եբրայական համալսարանի արվեստից բաժինեն: Տք. Սթոունը բացատրեց հայերուն գերը սուրբ երկրի արվեստի պատմության մեջ, խոսելով թե հնագույն հայատառ արձանագրությամբ խճանկար գետիններու, թե Ս. Յակոբյանց տաճարի ճարտարապետական արվեստին և թե արդիական հայկական հախճապակի արվեստի գործերուն մասին:

Մոտ հարյուր ունկնդիրներ ներկա գտնվեցան ժողովին: Երեսունամյակի տոնակատարությունը պիտի ավարտի եկող նոյեմբեր ամսուն, երբ տեղի պիտի ունենա մասնագիտական ժողով մը ես, նվիրված «Հայկական ուխտագնացության դեպի Երուսաղեմ» նյութին: